1895 ՅՈՒՆԻՍԻ 23 (Յուլ. 5) ՈՒՐԲԱԹ

№. 70—ՏԱՍՆԵՒՀՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 70

1895 ՅՈՒՆԻՍԻ 23 (Յուլ. 5) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

ԱՐԶԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐԶԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏՆԸ (Վ.Լեռամբենավսկի փողոց, № 22, տուն Խանդաթանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ
Օտարաբնակներին պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція "Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում՝ են հայերէն եւ օտար լեզուներով։

ԵՐԻՅՈՒՀԻ ԴԶԻՈՅ ՄԿՐՏՉԵԱՆ ԱՂԱՋԱՆԵԱՆՑ, ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԵԱՆ ՁՈՐԱՆԵԱՆՑ, ՍԱՐԳԻՍ ԱՒԱԳ ՔԱՀ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ և ԳՐԻԳՈՐ ՁՈՐԱՆԵԱՆՑԸ՝ յաւօր սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինները իրանց թանկագին մօր և վերջինները զոքանչ՝

ՏԻՐՈՒՀԻ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ

մահը։ Հանդուցեալի յուղարկաւորութեան հանդէսը կը կատարուի կիրակի յունիսի 25-ին, առաւօտեան 10 ժամին իւր սեփական տնից (Վանքի փոքր փողոց № 5) դէպի Վանայ Մայր եկեղեցին։ Ամբիծը կը կատարուի շարաթ երեկոյեան 7 ժամին։ (2—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Պեռուվիանները և Դուռը.—Սուլթանի առաջ բերած դժուարութիւնները։

Հարկերը Տաճկա-Հայաստանում.—Ապրստամբութիւնը Մակեդոնիայում։

Մի կարեւոր միտինգ.—Միացեալ-Նահանգների հիւպատոսարան Երզրումում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տաճկահայերին օժանդակելու ֆոնդ։ Լոնդոնում և Թիֆլիզում ժողոված գումարը։ Քաղաքային ինքնավարութիւն Կովկ. բոլոր քաղաքներում։ Խնայող. գանձ. նոր կանոնադրութիւն։ «Դարաղխանայի» փուլ գալը։ Հայերէն ներկայացումն։ Թուլթ խաղալու արգելը շոգեկառքերում։ Ինժենէր Լինդլէյի զեկուցումը։ Բուխարայի Էմիրը։ Տուրգենեվի «ՈւրՃակ բանաստեղծութիւններ» գիրքը։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Աիալցիայից։ Նամակ Դորպէթից։ Զուլուէրից։ Նամակ խմբագրութեան։

ՏԱՃԿ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Վանից։ Նամակ Ալաշկերտից։

ՖԵԼԻԵՏՕՆ.—Հայոց կաթողիկոսները։ Սասունցի Կրպօն կապանքում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԴՈՒՌԸ ՍՈՒԼԹԱՆԻ ԱՌԱՋ ԲԵՐԱԾ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(«Daily News» յունիսի 24).

Հեռագիր Կ. Պոլսի յառուկ թղթ. յունիսի 23.

Դեսպանները ամեն օր բանակցութիւններ ունին Բ. Դրան հետ յայտարարի որոշ պատասխան ստանալու համար։ Դրան ներկայացրած առարկութիւնները անորոշ բնաւորութիւն ունին, բացի վերահսկողութեան վերաբերեալ կէտին։ Երեք դեսպաններն էլ կատարեալ համաձայնութեամբ են գործում։ Կոնֆիդենսիալ կերպով հաղորդում են թէ անախորժ մի գրութիւն է ստեղծուել մեծ վէզիրի համար, որ խելամուտ է իրերի ծանրակշիռ դրութեան բայց պալատում ընդդիմութեան է հանդիպում։ Այստեղի քաղաքական շրջաններում պատմում են որ մեծ վէզիրը ներկայացրել է սուլթանին պատասխանի մի այնպիսի նախագիծ, որ ամբողջապէս ընդունում է պետութեանց առաջարկութիւնները. նախկին մեծ վէզիրը Քեամիլ-փաշան ևս այն կարծիքն է յայտնել, որ ծրագրուած պատասխանը պէտք է ընդունուի։ Բայց այս խորհուրդը մերժուեցաւ և գործը նորից յանձնուեցաւ նախարարներին։

Բացի այս հաղորդում են, որ մեծ վէզիրը հրաժարական տուեց, բայց սուլթանը չընդունեց այդ հրաժարականը։

ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

(„Daily Telegraph“ յունիսի 24).

Հայաստանից ստացուած տեղեկութիւններին նայելով, այդ երկրի հայ ազգաբնակութեան դրութիւնը չէ բարւոքվում։ Անկարգութիւնները և բռնութիւնները շարունակվում են։ Այս վեռ բոլորը չէ. իշխանութիւնը պահանջել է, որ մի տարուայ հարկերը այս գլխից վճարուին և այս պահանջը մեծ դժգոհութեան պատճառ եղաւ։ Մի քանի նահանգներում, ուր ազգաբնակութիւնը թաշուառ դրութեան մէջ է, այսպիսի մի պահանջ կատարելը միանգամայն անհնարին է։

Բրիտանական Միջերկրական ծովի նաւատորմիղը Ալէքսանդրէտ հասաւ։ Մակեդոնիայում օր աւուր աճող շարժումը, որի նպատակը Բերլինի դաշնագրութեան 23-րդ յօդուածի իրագործումն է, մեծ մտատանջութիւն է պատճառում Դրանը, որ ամեն կերպ աշխատում է հանդստացնել բոլգարական կառավարութեանը, խոստանալով «բերաձներ» շնորհել մի քանի նոր բոլգարական եպիսկոպոսներին Մակեդոնիայում։

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՄԻՏԻՆԳ

(«Daily News» յունիսի 24).

Երէկ երեկոյեան Մեծարգոյ Ալէքսանդր Մակրէն շօտլանդական ազգային եկեղեցում մի առանձին եկեղեցական կարգ կատարեց, որից յետոյ Էդուարդ Ատկինը մի ճառ խօսեց «հալածանքների ենթարկուած հայ բրիստոնեաների մասին։ Դ-ր Ասլանը, միստեր և միստրիս Պետրոսը և Մ-ր Վարդանը (վերջին երեքը—Սասունի փախստականներ են) ներկայ էին ժողովին։ Ցիշելով հայերի կրած տանջանքները և բրիստոնական ազգի պարտաւորութիւնը օգնութեան ձեռք մեկնել ասեցին,—նա ասաց, թէ չպէտք է մոռանալ, որ հայոց եկեղեցին շատ աւելի հին է քան թէ անգլիականը։ Արդեօք այս պատճառով նոքա չը-պէտք է անմիջապէս վճռեն մի բան անել այդ եկեղեցու համար։ Այնտեղ տանջւում են բանտերում—և նա կարդաց մի հայ բանտարկեալի նամակը, որին չվճռած են պահում հանրակ օրինաց։ Այնտեղ հեծում են բանտերում 3000 հայ, որոնք երբէք ոչ մի յանցանք չեն գործել։ Ազգը մինչև անգամ չգիտէ Սասունի կոտորածի զոհերի թիւը։ Այն տանջանքները, որոնց ենթարկում են այնտեղ բրիստոնեաներին - անկարելի է մինչև իսկ երևակայել։ Դժբաղդաբար բրիտանական ազգը ըստ երևոյթին սառել է դէպի այդ գործը—քաղաքական դիտումները ևս պէտք է նկատի առնել։ Բայց աւելի լաւ չէր լինի մերկացնել սուրը քան թոյլ տալ, որ այդ ազգը տանջուի։ Ինչպէս երևում է եւառնդուն միջոցներ գործ չեն դնվում սուլթանին ստիպելու, որ նա ընդունէ երեք պետութեանց առաջարկած ռէֆօրմների ծրագիրը։ Մոռանում են, որ իրերի ներկայ դրութեան պատասխանատուութիւնը ամբողջապէս Անգլիայի վրայ է ընկնում։ Մեր պարտաւորութիւնն է օգնել այս դժբաղդ ազգին։

Եկեղեցական կարգը վերջացնելուց յետոյ մի հասարակական միտինգ կայացաւ նախագահութեամբ Մեծ. Ալէքսանդր Մակրէի։

Մ-ր Ստեփանոսը (պարլամենտի անդամ) շեշտեց, որ հայերը—մի հին ազգ են, որ իր կրօնի համար հալածվում է։ Լիբանանի ստանութեանց գործում Անգլիան և Ֆրանսիան վերականգնեցին իրերի գոհացուցիչ դրութիւնը։ Այն ժամանակ որ և է դաշնագրութիւններ և գրաւոր պարտաւորութիւններ գոյութիւն չունէին։ Իսկ այժմ Անգլիայի վրայ Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածի հիման վրայ մի անուրանալի պարտաւորութիւն է դրուած։ Կայ և մի այլ բարոյական պարտաւորութիւն, որ թելադրում է Անգլիային քարը քարի վրայ չթողնել, մինչև որ Հայաստանում ռէֆօրմները չհաստատուին։ Բերլինի դաշնագրութեան ստորագրելու օրից այդ երկրում անընդհատ անօրէնութիւններ էին կատարվում։ Նա ցաւում է, որ հիւպատոսների զեկուցումներն ընդհանրութեան մատչելի չեն դարձրած մամուլի միջոցով։ Այն ժամանակ տաճիկների ձեռքերը կապուած կը լինէին։ Պէտք է յիշել, որ Սասունի կոտորածը, միմիայն եռմ այն կոտորածների շարունակութիւնն են, որոնք կատարվում են այդ երկրում 1822 թուից։ Խօսելով «Հայերին օժանդակելու ֆոնդի» մասին, նա ասաց թէ այն անձինք, որոնք կարդացել են «Daily News»-ի տրաւէրը և նուիրատուների ամեն օր տպագրուող ցուցակը, կատարեալ գաղափար ունին Ֆոնդի ընաւորութեան մասին։ Յօդուտ սովեալ հայերի ժողոված գրամը կուսարկուի մի յատուկ մասնաժողովի, որ կազմուած է Կ. Պոլսում կառավարութեամբ բրիտանական դեսպանի և հայոց պատրիարքի։

Մ-ր Վիլսոնը (պարլամենտի անդամ) առաջարկեց, որ միտինգը մի որոշում անի յօդուտ եւրոպական Կոմիսարի նշանակելուն և բանտարկեալներին ազատելու մասին։

Մ-ր Կրուկը պաշտպանեց այդ առաջարկութիւնը, յայտնելով որ մի խաղաղ ժողովրդի համար երբէք աւելի ժամանակակից չէ կարող լինել զէնքի դիմել քան այն դէպքում, եթէ սուլթանը մերժի իրենից պահանջած ռէֆօրմները իրագործել։

Որոշումը միաձայն ընդունուեց և ժողովարարութիւն սկսուեցաւ յօդուտ ֆոնդի։

ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ ԷՐԶՐՈՒՄ

(«Ռէչտէրի գործակալութեան» հեռագիր Վաշինգտոնից, յունիսի 22).

Միստէր Գ. Ս. Զիլսընին յանձնուած է Ամերիկայի Միացեալ-Նահանգների հիւպատոսարան հաստատել Էրզրումում։ Մ-ր Զիլսընը առաջ պետական դեպարտամենտի գլխաւոր ատիճանաւոր էր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՖՕՆԴ

(«Daily News», յունիսի 17).

ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ «DAILY NEWS»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Մենք յայտարարում ենք, որ տաճկահայերին օգնելու համար նուիրաբերութիւններ վ՝ընդունուին «Daily News»-ի խմբագրատանը, որ գտնվում է Բուվրի-Ստրատում (London, Bouveristreet, the «Daily News» Office)։

Առ ձեռն գրամով արած նուիրաբերութիւններն ընդունում է Էդուարդ Ատկինը (ֆոնդի դանձապահ), իսկ չէկերը «H. S. King and Co»։ Արգայլի դուքսը ֆոնդի նախագահն է, իսկ Ուեսթմինստերի դուքսը փոխ-նախագահ։

Հաւանդ սովորութեան համաձայն՝ երբ կաթողիկոսը դուրս է գալիս վեհարանից և Էջմիածնայ վանքի պարսպից՝ նրան ուղեկցում են պատուաւոր պահնորդներ (շաթիրներ), որոնք նշանակում են Էջմիածնայ վանքին պատկանեալ հայերից, նոյնպէս և հոգևորականութեան մի քանի անդամներ և երկու հոգևորական, որոնցից մէկը կրում է հայրապետական խաչը, իսկ միւսը՝ գաւազանը։ Կաթողիկոսը իւր մշական ընաւութիւնն ունի Էջմիածնայ վանքում. երբ նա հարկաւոր է համարում 4 ամսից աւելի բացակայել վանքից, սորա համար Բարձրագոյն հաւանութիւն է խնդրում։

Ս. Գրիգոր Լուսաւորչից սկսած կաթողիկոսական աթոռը մնաց Էջմիածնում. չնայելով, որ լինում էին ժամանակներ, երբ կաթողիկոսները, քաղաքական զանազան անախորժ հանգամանքներից ստիպուած ժամանակաւոր կերպով թողնում էին այդ վանքը և փոխադրւում ուրիշ տեղ։ Այսպէս 451 թուին Վարդանանց յայտնի կրօնական պատերազմից յետոյ, որ մղուեցաւ Պարսից Յազկերտ II արքայի դէմ, երբ Դուին քաղաքը դառաւ պարսից և ապա արաբական իշխողների մայրաքաղաքը, հայրապետական գահը ժամանակաւորապէս տեղափոխուեցաւ Դուին։

IX և X դարերում, Բագրատունեաց թագաւորութեան ժամանակ, աթոռը տեղափոխուեց Ձիրակ։ XI դարում յոյները, ցանկալով հայոց կաթողիկոսների իշխանութիւնն ու ազդեցութիւնը թուլացնել, անհնարին դարձրին նոցա մնալը հայաստանի սահմաններում, որի հետևանքն այն եղաւ, որ 1065 թուին հայոց հայրապետական աթոռը փոխադրուեց Մեծ Հայաստանի սահմաններից դուրս, այն է՝ Կիլիկիայի Սիս քաղաքը։ 1441 թուին հաստատութեան կամ անձին։ Ամենայն Հայոց Պատրիարքը Կաթողիկոսի գահի թափուր եղած ժամանակ Էջմիածնի Սինոդը ծանուցագրեր է ուղարկում այդ մասին բոլոր հայ լուսաւորչական թէ Ռուսաստան գտնուած և թէ նորա սահմաններից դուրս թեմերին և մի տարի ժամանակ է նշանակում նոր կաթողիկոսի ընտրութեան համար։ Իւրաքանչիւր թեմ երկու պատգամաւոր է նշանակում կաթողիկոսի ընտրութեան համար՝ հոգևորական և աշխարհական։ Բացի այս պատգամաւորներից կաթողիկոսի ընտրութեան մասնակցում են Սինոդի բոլոր անդամները և Էջմիածնում գտնուող եօթը աւագագոյն եպիսկոպոսներ, իսկ եթէ այդքան եպիսկոպոս չկան՝ այդ թիւը լրացւում է Էջմիածնի աւագագոյն վարդապետներից։ Ընտրութիւնը կատարւում է Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորչի տաճարում. բոլոր ներկայ գտնուողների ձայները ժողովելուց և աչքի անցնելուց յետոյ այն գրաւոր առաջարկութիւնները, որոնք ուղարկուած են լինում Սինոդին ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցողների կողմից, չորս հոգի թեկնածու են ճանաչւում, որոնք շտած են լինում առաւելագոյն քուէներ. քուէների հաւասարութեան դէպքում վիճակով որոշում են, թէ ովքեր պիտի աւագագոյն համարուին. նոցա մէջից բոլոր ներկայ գտնուողները ընտրում են երկուսին իրրև թեկնածու ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի պաշտօնի համար։ Այս թեկնածուները առաջարկւում են ի բարեհաճեցողութիւն Նորին Կայսերական Մեծութեան։ Ռուսաստանի հայոց եկեղեցական գործերի կառավարութեան հրամանը հրատարակուեցաւ 1836 թուի մարտի 11-ին և առաջին անգամ գործածութեան մէջ մտաւ Ներսէս V-ի ընտրութեան ժամանակ (1843 թուին)։

կայացաւ Վաղարշապատի ժողովը, ուր որոշուեցաւ պատրիարքական գահը յետ դարձնել Էջմիածին։

Ծայրագոյն Պատրիարք-կաթողիկոսի ներկայացուցիչն ու փոխանորդը Պաղեստինեում և Եգիպտոսում համարւում է Երուսաղէմի հայոց պատրիարքը։ Թէ իսկապէս նրբ է սահմանուել Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը՝ ճշտիւ պարզուած չէ. յայտնի է միայն, որ տակաւին 637 թուին Խոսրովը Էմիրը Երուսաղէմն առնելով, տեղական հայոց պատրիարքի իրաւասութեան ենթարկեց ասորոց և կոպտաց եկեղեցիները։ Ծայրագոյն պատրիարք կաթողիկոսի փոխանորդը Տաճկաստանում համարւում է Կ. Պոլսի հայոց պատրիարքը, որին յանձնուած է Տաճկաստանի հայերի գործերը։ Այս պատրիարքութիւնը հիմնուած է 1453 թուին։ Երուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարքներին կարող է հրաժարեցնել կաթողիկոսը կամ նոյն իսկ ժողովուրդը, բայց ինքը կաթողիկոսն անփոփոխ է, իրրև ս. օծումն ընդունուած։

Էջմիածնի այժմեան ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք-կաթողիկոսն է Մկրտիչ Ա-ն։ Այս մեծ պաշտօնի նա ընտրուեցաւ 1892 թուին Էջմիածնում տեղի ունեցած ազգային ժողովի մէջ միաձայն Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի և Մեծ Բրիտանիայի (Հնդկաստանի) բոլոր հայերից։ Արդի կաթողիկոսը վայելում է հայերի խորին համակրութիւնը, որոնք անուանում են նորան «Հայրիկ» (հարազատ հայր)։ Այժմեան կաթողիկոսի յատկութիւններից մինը համարւում է նորա անսահման սէրը դէպի իւր ազգը, համբերութիւնը, պատրաստակամութիւնը ամենքին օգնելու, առանց կրօնի խտրութեան, ով իրանից օգնութիւն է խնդրում։ Նորա վեհարանը շքեղութեամբ չէ փայլում. Կաթուղիկոսն ապրում է չափաւոր համեստ սաղ ու կարգով։

«Քրիստոսի ծառայ և կամօք և ողորմութեամբ Նորին կաթողիկոս Հայոց»—այսպէս էին գրւում Հայոց կաթուղիկոսները. հետագայ ժամանակներում այս տիտղոսը մի փոքր ընդարձակուեց։ Օրէնքով ճանաչուած տիտղոսների շարքում կաթուղիկոսն անուանում է Օծեալ Տեառն և Վեհափառ։ Կաթուղիկոսը ստորագրում է սովորաբար կարմիր թանաքով։ Հայրապետական հրովարտակի վրայ դնում է կնիք, որի մէջտեղում գտնւ է ձակերպած, իսկ շուրջը կաթուղիկոսի անունը։ Կաթուղիկոսի լիակատար տիտղոսը Կոնդակներում (այսպէս են կոչում Հայրապետական թղթերը) այսպէս է. «Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի և, անհոսանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի»։

Հայոց սուրբ տեղերի մասին բազմաթիւ վեռ տանդութիւններ կան։ Էջմիածինը, կաթողիկոսի աթոռանիստը, որին ի հնումն ամեն մի հայ պարտական էր այցելել գէթ մի անգամ իւր կեանքում, հուշկուած է իւր հնութեամբ։ Այնտեղ, ուր մի ժամանակ արքայանիստ Վաղարշապատն էր գտնվում, այժմ Էջմիածինն է կառուցուած, իսկ նորան մօտիկ երեք ուրիշ վանքեր՝ Գայիանէի, Հռիփսիմէի և Զողակաթի, հէնց այն տեղերում, ուր աստուածեղէն շողը ծագեց ս. Գրիգորի տեսեան միջոցին։ Էջմիածնի մայր եկեղեցին, որ խաչաձև է շինուած, երկար դարերի ընթացքում պահպանել է այն ընդհանուր ընաւորութիւնն ու մեծութիւնը, որ տուած էր տեսիլքում։ Այստեղ ամեն ինչ յիշեցնում է այն ժամանակները, երբ այդ երկրում առաջին անգամ ճշմարիտ հաւատի լոյսը ծագեց։ Էջմիածնում պահվում են Հայոց եկեղեցու ամենամեծ սրբութիւնները՝ ս. Գրիգորի աջը, երանելի Հռիփսիմէի գաւազանը և Թադէոս առաքեալի, ս. Գրիգոր Լուսաւորչի սրգու Արիստակէսի և նորա ազգական ս. Յակոբի աջերը։ Հայոց հնաւանդ սովորութեամբ այս սրբազան առարկաները դասաւորուած են արծաթեայ առանձին քանդակագործ անօթների մէջ, որպէս զի նոցանով օրհնեն ժողովրդին, ինչպէս նոյն իսկ սուրբերի ձեռքերով։ Այնտեղ է պահվում նաև Նոյեան տապանի փայտի կտորը, որ, ըստ տեղական աւանդութեան, ձեռք է բերել ս. Յակոբը։ Մի արծաթեայ փառաւոր տուփի մէջ, որի վերայ ձուլուած են անօրինական պատկերներ, պահում է իւրաքանչիւր քրիստոնէի համար սրբազան գեղարդը, որով Փրկիչը խոցուեցաւ խաչի վրայ։ Առաջ, հին մարդկանց վկայութեամբ, գեղարդի հետ պահվում էր ս. Էջմիածնում և այն բեւեռներից մէկը, որոնցով Փրկչին բեւեռեցին խաչի վրայ։ Իսկ այժմ էլ չկայ։

Աշխարհակալաց հարստութեան հիմնադիր Վաղարշակը, Հայաստանի նշանաւոր թագաւորներից մինը, Վաղարշապատ քաղաքը արքայանիստ դարձրեց։ Վաղարշակ թագաւորը երկրորդ դարում պատեց նորան նոր պարսպով և անուանեց Նոր քաղաք։ Սասանեաններից մէկը՝ Շապուհ երկրորդը աւերեց այդ քաղաքը 354 թուին. այդ միջոցին, ինչպէս հաւատացնում է Փաւստոս Բիւզանդացին, 19,000 տուն կար այնտեղ։ Քաղաքը շնորհուեցաւ, բայց գիւղը այժմ էլ Վաղարշապատ է կոչվում։ Այն տեղի վերայ, ուր տեսիլը երևեցաւ, Մեծն

գոհ. մասնաժողովի անդամներն են.
Մեծարգոյ Ստեփան Է. Գըլաքսանը (Հօվարդէնի բեկտորը).
Մ-ր Գ. Ս. Ստեփանոսը, պարլամէնտի անդամ.
Մ-ր Ս. Է. Զուանն, պարլամէնտի անդամ.
Սեօր Ջորջ Բ. Սմիտուլլ. Բարտ, պարլամէնտի անդամ.
Սեօր Ջոն. Բ. Բօրինսը.
Մեծարգոյ Կանոն Հօր.
Մեծարգոյ Կանոն Վիլբֆֆօրս.
Մեծարգոյ դ-ր Ջոն Կլիֆֆորդ.
Մեծարգոյ պրոֆեսոր Ագար Բիտ.
Մ-ր Գ. Ա. Զանինգ, պարլամէնտի անդամ. և
Մ-ր Էդուարդ Ատկին, (պատուաւոր գանձապահ)։

Շատ տարիների ընթացքում մենք յատուկ թղթակցութիւններով և մեր ձեռքում եղած բոլոր այլ միջոցներով Մեծ-Բրիտանիայի ազգաբնակութեան ուշադրութիւնը դարձնում էինք Թիւրքիայի հայերի թշուառ վիճակի վրայ, դիմելով Անգլիայի գործօն համակրութեան և օգնութեան։ Նորին Մեծութեան Թագուհու կառավարութեան ստացած զեկուցումները՝ Արևելքի իր ներկայացուցիչներից հաստատում են մեր հաղորդած տեղեկութիւնները Բիթլիսում և Վանում քաշած տառապանքների մասին։

Նոյն իսկ Էրզրումի նահանգում, ինչպէս պարզեց Ուեստմինստերի դուքսը, Սամսոյ կոտորածից փախստականներ կան, մեծաւ մասամբ կանայք և մանուկներ, որոնք ոչ մի պաշտօն չունին։ Մի տարի առաջ այս մարդիկը համեմատաբար բարւոք վիճակ ունէին։ Այժմ սոքա բոլորիկ և ցնցոտիներում փաթաթուած իրենց օրուայ պարէնը իրրև ողորմութիւն խնդրում են նոցանից, որոնք իրենցից շատ քիչ ունեւոր են։ Բացի այս, կան նաև հազարաւոր փախստականներ, որոնց ապրուստութիւնը և ապագան սոսկալի են թողնել իրենց բնակարանները գիւղերում. սոքա փախել են քաղաքները, ուր յոյս ունին անձնական ապահովութիւն և ողորմութիւն գտնել իրենց կեանքը փրկելու համար։

Այն բոլոր նուիրարերութիւնները, որոնք կ'ուղարկուին «Daily News»-ի խմբագրութեան կամ Ուեստմինստերի դուքսին (Grosvenar - House) կ'արձանագրուին մեր թերթի սիւնակներում։ Ամբողջ գումարը, առանց գրաւի և ս. Գրիգորը կառուցին առաջին քրիստոնէական եկեղեցին և անուանեցին Էջմիածին, այսինքն «Իջաւ Միածինը»։ 529 թուից մինչև 618 թ. եկեղեցին աւերուած էր։ Կամիսաս կաթողիկոսը նորից վերաշինեց և նոր կաթուղիկէ կանգնեց։ Հետագայ բոլոր ժամանակներում եկեղեցուն կից այլ և այլ շինուածներ կառուցեցին։ Եկեղեցին սասսիկ աւերուեց Ջահ-Աբասի ձեռքով. 1629 թուին նա բոլորովին վերաշինուեց այն ձեւով, ինչպէս այժմս է։

Հին ժամանակ վանքի մատենադարանը չափազանց հարուստ էր, բայց վանքի յաճախակի ամայութեան և գիտութեան ընկնելու պատճառով նորանում, գրքերի մեծ մասը կորաւ, և այժմ մօտ 3000 *) գրչագիր կայ նշանաւոր պատմական և աստուածաբանական բովանդակութեամբ։ Բացի դրանից բազմաթիւ հետաքրքիր երկասիրութիւններ կան եկեղեցական աւանդութեանց մասին։ Երբ 1809 թուին պարսիկները կողոպտեցին վանքը, տարան այն բոլոր գրքերը, որոնք ընտիր կերպով կազմուած էին։

Հայաստանը՝ աւերակների երկիր է. Բայց այս աւերակներն էլ նոյնպէս կրօնական աւանդութեանց հոգի են շնչում։ Նոցանից մէկը, որ ս. Յակոբին է նուիրուած, միստիկական մի աւերդ գիծ է աւելացնում յաւէտ խորհրդաւոր Արարատի պատմութեան։ Ս. Յակոբը, որ Գրիգորի աղգականն էր, պատկանում է Հայաստանի ամենանշանաւոր մեծագործներին և նորա յաւէրժական անը պահւում է ս. Էջմիածնում։ Տեղական աւանդութիւնն ասում է, որ ս. Յակոբը Արարատի անձաւներում սքանչելագործ կեանք վարելով՝ տանջւում է Նոյեան տապանի տեսնելու ցանկութեամբ։ Քանի մի անգամ նա փորձեց բարձրանալ Արարատի գագաթը, բայց ամեն անգամ հէնց որ թաւում էր, թէ այդ աւետարար յոյսերը կատարուելու վրայ են, քանը գալիս էր վրան և մի անյայտ զօրութիւն յետ էր գարձնում նորան լիրան ստորոտը։ Յակոբը չէր ցանկանում սակայն իր գիտաւորութիւնը թողել։ Եւ ահա մի անգամ տեսիլան մէջ երևեցաւ նորան հրեշտակը և արգելեց լեռը բարձրանալ, իսկ իրրև վարձ նորա աշխատութեան, յանձնեց նորան նոյեան տապանի փայտի մի կտոր։ Յակոբը ընծայեց այն էջմիածնին, իսկ տեսիլքի վայրում ապագայում կառուցուեցաւ տաճար ս. Յակոբի անունով։

Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանց։

*) Մեր ունեցած տեղեկութիւններով զրչագիրների թիւը շատ աւելի է, թերեւս դրա կրկնապատիկը։ Ծ. Թ.

ՍԱՍՈՒՆՅԻ ԿՐՊՕՆ ԿԱՊԱՆԵՔՈՒՄ *)

(Եղելութիւն)

ԺԲ.

Երեք ամիս, ինչպէս երեք պարի անցան Կրպոյի համար Դիարբէքիրում։ Էմին փաշան ու նորա կինը լաւ ընդունեցին նորան, շուտով սիրեցին էլ, ծանրը գործ չտուին, այլ սկսեցին նորա վրայ նայել ինչպէս մի անօրինակ, ճաշակի յարմար, շռայլութեան առարկայի, տան մէջ արտօնաւորուած սիրելի...

Ինքնարերաբար այդտեղ էլ Կրպոյին վայելչապէս ընկաւ գումն ու նորա բնակիչների խնամատարութիւնը։ Հետզհետէ նորա շուրջ բոլորն սկսեց տակաւ առ տակաւ Իսմայիլ փաշայի տան հեռաւոր նմանութիւնը բերել. բայց այդ յարմարութիւններն անհարազատ, ժամանակաւոր և մնասի էին, Կրպոյի աչքին ընաւ չէին գալիս. նա թէպէտ գիտում, որտեղում էր՝ թէ ինչ կայ անելու, կատարում, յարդարում էր այս կամ այն բանը, բայց միշտ մի տեսակ բռնադրոս, օտարաբար, ոչ ի սրտէ, այլ հարկից ստիպուած էր անում ինչպէս մի մարդ, որ անակնկալ հանգամանքների բերմամբ ցամաքից կորրուած ընկած լինի նաւակ, կամ աւելի վատ՝ մի կտոր սախտակի կամ սառուցի վրայ ծովի մէջ և մինչև յուսացուած փրկութեան, ցամաքի հասնելն աշխատ այնուամենայնիւ իւր շուրջն յարմարութիւններ ստեղծել...

Եւ յարմարութիւնը կային էլ՝ ոչ միայն վատատեսուած, այլ և ձրի տրուած, ծովը խաղաղ էր երևում, սառոյցն հատատուն...Ոչ ոք չդիտէք Կրպոյի ցաւը. ոչ ոք չէր լսում, չէր տեսնում թէ ինչպէս գիշերները քնի մէջ յանկարծ զոռում էր թռչուտ արենապարան ու վեր թռչում տեղից, երեսը խաչակնքում ու կուրծքը ծեծելով ընկնում այս, այն անկիւնը...

Աղատ ժամանակ շատ ունէր Կրպօն։ Երբեմն եկեղեցի էր գնում, զալիս։ Այնտեղ նա ծանօթացել էր ծխական ուսումնարանի ուսուցչի հետ. աւելի ճիշդ՝ այդ ուսուցիչն էր առաջ նորան մօտեցել, ծանօթացել նորա հետ և մի մեղմ բարեկամական կապ հաստատել նորա և իւր մէջ։ Դա մի զուարճալի երիտասարդ էր, գրեթէ պատանի, որ դեռ չէր «փորձուել», չէր անցել «կեանքի դպրոցի ընթացքը», ուրիշ խօսքով՝ չէր վշացել, չէր սառել հասարակական ատեն մի խնդրից ու մնացել ինքն ու իւր «ես»-ը։ Ո՛չ, նորաւարտ ուսուցիչ Զարդ Արմենակեանը մի վառվռուն, աշխոյժ, դէպի բարին ու գեղեցիկը ձգտող «հայրենասէր յոյս»երից մէկն էր, որ և ինքն իրան «մեծ գործի», «իրկութեան մարգարէներից» մէկն էր համարում և պատրաստ էր օր առաջ գլուխը դնել հասարակաց օգտին նուիրուած գործի վրայ. երգիչը թափառական մայիսորայի մեսօգից առաջ եկած պակասութիւնները շուտով կարողացել է ուղղել։ Ներկայացնելու են «Կրեչինսկու հարսանիք» կոմեդիան։ Ի բոլոր սրտէ ցանկանում ենք որ ներկայացման հասցէը բաւարար լինի և պ. Եղիազարեանին վիճակուած չլինի այդ տուիթով Կրեչինսկու հետ միասին բացականչել «Сорвалось!»

* * *

Այսօր քաղաքային խորհրդի գահլիճում երեկոյեան 8 ժամին ինժեներ Լինդլէյը կարդալու է ֆրանսիերէն լեզուով իր զեկուցումը կոյուղիների մասին։

* * *

Բուխարայի Էմիրը այսօր յունիսի 23-ին լինելու է Ուզուն-Ագա. Պետրովսկ ժամանելու է վաղը երեկոյեան, իսկ այնտեղից ամսոյս 25-ին կ'ուղևորուի Պետիգօրսկ։

* * *

Սամանը Տուրգենևի «Արձակ բանաստեղծութիւնների» հայերէն թարգմանութիւնը, որ պատրաստում է պ. Ա. Դատուրեանին. ռուս տաղանդաւոր վիպագրի «Արձակ բանաստեղծութիւնները» մեծ հետաքրքրութեամբ են կարդացւում։ Թարգմանութեան լեզուն հարթ է, մաքուր, մինչև իսկ գեղեցիկ. ափսոս միայն որ պ. թարգմանիչը երբեմն անտեղի գաւառաբանութիւններ է գործածում։ Ո՞բան բանաստեղծական են օրինակ «կուահաչի տար» դարձուածի պէս բառերը բանաստեղծութեան մէջ։

* * *

ՄՈՍԿՎԱ, յունիսի 15.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Յունիսի 4-ին Մոսկուայի Դասապետեան Անկելանոցի աւագ անդամ պ. Գէորգ Լիանոզեանի նախագահութեամբ հայ ծխականների ընդհանուր ժողով կայացաւ։ Անկելանոցի խորհրդարանի անդամներն այս անգամ սոքա են. աւագ անդամ Գ. Լիանոզեան, Տ. Էքիզլէր, Մ. Սահարբէկեան. անփոփոխ անդամ Յովհաննէս Ժամհարեան՝ սոքա նիստերին մասնակցում է ա. ք. Յարութիւն Տէր-Ղուկասեանցը։ Երբ նիստը բացուեցաւ վարչութեան քարտուղար պ. Գ. Կերիլովը կարդաց 1894 թուականի հաշիւը, որ բաժանուեցաւ ներկայ ծխականներին։ Հաշուից երևեցաւ, որ Անկելանոցի տան վերաշինութեան համար յարգելի չորս անդամներն էլ, որոնք ունեւոր անձինք են, իւրեանց կողմից մի-մի հազար ռուբլի են նուիրել, որպէս զի անկելանոցի մայր գումարը անձեռնմխելի մնայ։ Այս իմանալով՝ ներկայ հասարակութիւնը պ. Ա. Եգիանցի բերանով յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը խորհրդարանի անդամներին նոցա բերմունաց զործունէութեան և գովելի նուիրատուութեան համար։ Այնուհետև սկսուեցան ընտրութիւնները, որովհետև խորհրդարանի անդամ պ. Մ. Սահարբէկեանի անդամակցութեան ժամանակը լրացել էր։ Արդէն. պարոնի կրկին ընտրութեան մասին կասկած չէր կարող լինել. և արդարև երախտագէտ հասարակութիւնը ձայների առաւելութեամբ ընտրեց պ. Սահարբէկեանին։ Ժողովի զբաղմունքը ապրկալի չէր. նիստը շատ խաղաղ էր, որովհետև անհանգիստ տարրերը առաջին անգամ էին ներկայ գտնւում այս ժողովին, ուր անկարգութիւնները մինչև օրս լսուած բան չեն։ Ընտրութիւններից յետոյ պ. Ս. Մամիկոնեանը յիշեցրեց ժողովին, թէ այս տարի. աշնանը լրանալու է Անկելանոցիս 50 ամեակը և թէ ցանկանալի կը լինէր այդ օրը յաւերժացնել մի որևէ բարի գործով, աշխատել ընդլայնել Անկելանոցի ծրագիրը, որ հիմնադրի կամաց հակառակ էլ չէ։ Բացի գորանից, շարունակեց պարոնը, քաղաքը անդադար աճում է և նրա չինութիւնները օր աւուր մօտենում են հայոց գերեզմանատանը, ուր գուցէ կ'արգելուի մեռել թաղելու և այդ պատճառով ժամանակ է այդ մասին մտածել և թէ լաւ կը լինէր հայոց գերեզմանատանը յատկացնել Վանքի անունը. ու բերել տալ մի վարպետ։ Մի քանի անձինք ընդդիմացան պարոնի վերջին առաջարկութեան. մէկը ասում էր թէ լաւ կը լինէր ընթերցարան բանալ, ուր չբաւոր ծխականները կարող լինէին կարդալ զբաղեր ու լրագիրներ, միւսը թէ օգնութիւն տալ աղքատ ուսանողներին, բարեգործութիւններ անել և այլն։ Անիսով պ. Մամիկոնեանը բոլորի առածները լսելուց յետոյ, պատասխանեց, ես զարմանում եմ, ինչու ձեզ չփոթում է վանքի անունը, երբ դա մի նոր բան չէ ոչ ոքի համար, քանի որ Անկելանոցի կանոնադրութեան՝ V. յօդուածում սոքա մասին պարզ յիշուած է (Когда гг. душеприкащики будутъ имѣть возможность приступить къ возведенію каменной ограды вокругъ Армянскаго кладбища, находящагося за Прѣсненской заставой... и самое сіе мѣсто приметъ названіе монастыря". Տես էջ 11—12 Касперовскій Домъ для пріюта бѣдныхъ Армянъ въ Москвѣ. 1889 г. Москва).

Այնուհետև առաջարկուեցաւ ընտրել մի առանձին յանձնաժողով, որ պիտի մշակէ ծրագիր Անկելանոցի 50-ամեակը տօնելու համար։ Ժամի երեքի մօտ նիստը փակուեցաւ։

Մեր կողմից կարող ենք յարել, որ գերեզմանատան շրջ կողմը վաղուց քաշած է բարձր և գեղեցիկ պատ, որ կարելի է կոչել պարիսպ, եկեղեցին կայ, մնում է փոքր ինչ նորոգել գերեզմանատան տները յարմարացնելով գոյա ընդարանի համար և ապա հրաւիրել մի վարդապետ, որի ներկայութիւնն ուելի քան անհրաժեշտ է Մոսկվայի նման մի քաղաքում, ուր հայոց լիթը ամում է...

Զ.

* * *

ԱՄՍԱՂՅԽԱ, 19 յունիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Երկկ Կարապետեան տպայոց դպրոցի գահլիճում կայացաւ տեղւոյս դպրոցների տարեկան հաշուետուութեան հանդէսը։ Դահլիճի թատրոնական բեմը ճաշակով զարդարուած էր։ Բեմի ասելը կախուած էին մէկ կողմից թագաւոր կայսեր, միւս կողմից Հայրիկի վարդենիներով զարդարուած պատկերները. բեմի խորքում, մէջտեղը կախ էր արուած տպայոց դպրոցի երջանկայիշատակ հիմնադրի—Կարապետ Եպիսկոպոսի պատկերը։ Բեմի յատակի վրայ թափթփուած էին տեսակ տեսակ ծաղիկներ ու բոյսեր։

Ս. Գրիգոր եկեղ. պատարագը վերջանալուց յետոյ, ժողովուրդը հետզհետէ սկսեց հաւաքուել և լցնել դպրոցի գահլիճը։ Ժամը 11½-ից փոքր ինչ անց բացուեց հանդէսը և սկսուեց «Ո՞վ Տէր Աստուած» մաղթանքով, որից յետոյ ամբիոն բարձրացաւ դպրոցների հոգաբարձուներից մէկը և կարդաց դպրոցի տնտեսական հաշիւը։ Այնուհետև Եղիսաբէթեան դպրոցի աւագ-վարժուհին կարդաց օրիորդաց դպրոցի ուսումնական հաշիւը։ Երգեցիկ խումբը զեկավարութեամբ պ. Ց.-Կարապետեանի փոփոխակի երգում էր այլ և այլ երգեր։ Փոքր ինչ յետոյ դրից հասարակութեան առաջ ազգոյց դպրոցի աւագ ուսուցիչը իր հանդուգութեանը յանձնուած դպրոցի մանրամասն ուսումնական հաշիւը։ Գարնը, ի միջի այլոց, մի քանի խօսք ուղղեց ծնողներին, խնդրեց նրանց հետաքրքրանց որդոց կրթութեան գործին, մասնակցել դպրոցին և հետաքրքրուել դպրոցական գործով։ Մեր նպատակից դուրս է այստեղ մէջ բերել ազգոյց և օրիորդաց դպրոցի մանրամասն ուսումնական հաշիւը։ Հարկաւոր ենք համարում ասելու միայն այն, որ թէ ազգոյց և թէ օրիորդաց դպրոցներում փոխադրուածների թիւը քիչ է, շատ դասարաններում փոխադրուածների թիւը նոյն իսկ պակաս է մնացողների թուից։ Սա մի աչքի ընկնող երևոյթ է։

Դպրոցների ուսումնական հաշիւների ընթերցումից յետոյ, բեմ բարձրացաւ տիկ. Ց.-ը և դասնտով ընթացաւաւ օրիորդներին մի գեղեցիկ խրատական դաս կարդաց նրանց, յորդորեց նրանց լինել ազնիւ, աշխատասէր և պարտաճանաչ։ Տիկնոջ խօսքը ծափահարութեամբ ընդունուեց։

Ընթացաւաւ օրիորդներից մէնը հրապարակով ուզում էր իր և իր ընկերուհիների կողմից շնորհակալութիւն յայտնել ուսուցչական խմբին նրա՝ ի-նուիրութիւններով հաղորդուող լուր ամենից աւելի էր դարձրել իւր վրայ ուսուցչի էլ ուշադրութիւնը, իսկ Կրպոյինը աւելի ևս...այդ՝ Մօլլա-քէշիշի սպանութեան մեծ լուրն էր...

Ինչ՞ր ասեմ՝ չէ գրուած այդ մասին լրագիրներում. էլ «Մօլլա-քէշիշին գողերն են սպանել, որովհետև նորա գոյքը յափշտակուած է», էլ «նորան նոյն իսկ իւր տան ծառաներն են սպանել, որովհետև նոցա մօտ է գտնուած մօլլայի թանկագին իրեղէններից շատերը, և այդ պատճառաւ նորա բանտարկուած են...». էլ «այդ յանդուգն եղեռնագործութիւնը գաւառների ծածուկ ընկերութեան գործն է...», էլ «այդ մի վրէժ է մօլլայի սիրահարական յաջողութիւններից մէկի կամ միւսի փոխարէն...»։ Մի լրագիր ասածը միւսը ջնջում էր և այդ ջրի մէջ իւր կողմից մի նոր քաղ դնում լողալու։ Ինչ ասել կուզի, որ ամեն մի ազգութեան կամ ուղղութեան լրագիր իւր ուզած ենթադրութիւններն էր անում այդ իրողութեան մասին և իւր հաւանած բացատրութիւնները տալիս. հայ լրագիրներից մեծագոյն մասը պնդում էր, որ այդ եղերական վախճանն ամենայն հաւանականութեամբ հետևանք պիտի լինի սպանուածի մասնաւոր խառնակեցնաց կեանքի։ Թուրք լրագիրներն, ընդհակառակն, աշխատում էին հաստատել, թէ այդ անտանելի սճիրը հաւատի, քաղաքական համոզմանց հետ կապ ունի, և թէ «անմեղ նահատակի արիւնը մինչև Ալլահի աթոռի պատուանդանի մօտ նստած Առաքելի՝ Մուհամմէդի ականջն է բողոքում և դատ, արժանի պատիժ պահանջում...»։ Այդ լրագիրներից մէկն այնքան հեռու էր գնացել, որ իւր սրտակից սրտակուռ մթերուած թոյնը հայերից անց էր կացրել, շաւռ տուել արտասահմանեան «գեաուրների», կամ ինչպէս

տարանի տեսնելու ցանկութեամբ։ Քանի մի անգամ նա փորձեց բարձրանալ Արարատի գագաթը, բայց ամեն անգամ հէնց որ թաւում էր, թէ այդ աւետարար յոյսերը կատարուելու վրայ են, քանը գալիս էր վրան և մի անյայտ զօրութիւն յետ էր գարձնում նորան լիրան ստորոտը։ Յակոբը չէր ցանկանում սակայն իւր գիտաւորութիւնը թողել։ Եւ ահա մի անգամ տեսիլան մէջ երևեցաւ նորան հրեշտակը և արգելեց լեռը բարձրանալ, իսկ իրրև վարձ նորա աշխատութեան, յանձնեց նորան նոյեան տապանի փայտի մի կտոր։ Յակոբը ընծայեց այն էջմիածնին, իսկ տեսիլքի վայրում ապագայում կառուցուեցաւ տաճար ս. Յակոբի անունով։

Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանց։

*) Տես «Արձագանք» № 67.

եթէ ունէր նա մի անձկութիւն՝ այդ այն էր՝ թէ ինչու տէրի չէ ներկայանում իւր անձնազոհութեան պատարագանութիւնն ապացուցանելու...Հէնց առաջին անգամ նա տեսաւ Գրպոյին, մօտ վազեց, քաշ տուեց իւր մօտ, իւր խուցը, իւր գրեթէ միակ կարասու՝ գրասեղանի առաջ նստեցրեց նորան իւր աթոռակի վրայ ու ինքը կանգնեց նորա դիմաց, այնպիսի վառ հետաքրքրութեամբ նայելով նորան, որ Կրպոյին թուաց, թէ հիմա անշուշտ՝ վրայ կընկնի, կը լափի իրան։

—Ո՞վ ես, ինչ ես, որտեղացի ես... տեղաց յանկարծ Կրպոյի գլխին հարցերի տարափը. էլ՝ ինչ գործի ես, էլ՝ ինչու ես այստեղ. էլ՝ ձեր կողմերից ինչ ինչ խաբարներ ունիս. ժողովուրդը լաւ է, թէ՝ շատ է չարչարուում, քրդերն են իրանց կոտորում, թէ՝ իրանք փախցնում քրդերին, քանի դպրոց ունին, ովքեր են ուսուցիչները. վաշխառուներն են աւելի ծծում, թէ՝ տէրութեան պաշտօնեաները, քահանաներն իրանց հօրը խնամել, պաշտպանել էլ գիտեն, թէ՝ միայն խուզել քրիստոնէորս օտար քարոզիչներ չնա կան. թէ՝ անկան որդեր և այլն և այլն. բանը հասաւ այնտեղ՝ թէ հանդէսները, հարսանիքներն ինչպէս են կատարուում և... և արդեօք Կրպօն զրոյցներ, երգեր շատ գիտէ, չի կարելի, որ նա մէկ-մէկ ասի, իսկ մեր հարցասէր ուսուցիչը լսի... և գրէ։

Կրպօն առաջ կտակածնօք էր վերաբերուում դէպի հետաքրքիր ուսուցչի հարց ու փորձը, մանաւանդ երբ որ նա հանեց իւր ծոցից յուշատետրն ու մատիտը և սկսեց լսածներից մի-մի բան գրի անցկացնել, բայց շուտով Կրպօն այն էլ նկատեց՝ որ իրան տրուած հարցերից ոչ մինը ոչ իրան են վերաբերում, ոչ հարցնող ուսուցչին, ու մաքի մէջ որոշեց՝ «խոզ տղան, երևի, խելքից փոքր ինչ թեթև է». սակայն քիչ էլ յետոյ, երբ Արմենակեանը մի երկու անգամ շատ ընկան կերպով, կարծես թէ պատահաբար իւր գիւղացի հղբօր սրտի այնպիսի լարերին խփեց, որոնց գոյութեան մասին ինքը սրտի աէրն էլ սրոշ գիտակցութիւն չունէր, երբ մազաղաթի բանասէրը մի-մի էլ այնպիսի ծանրախոհ հասուն խորհուրդներ տուեց, որոնց նրմանը Կրպօն չէր լսել ոչ քահանայից, ոչ սպիտակամիրուք աշխարհականից, երբ Կրպօն լաւ նայեց՝ մարդարէի պէս իւր շատ մաքերը գուշակող գիւրատես պատանու յստակ, անմեղ հայեացքին, նորա մեսաբաթայը շաղանակագոյն մազերին, համակրելի, փոքր ինչ նիհար դէմքին ու նորա պարզ, սիրալիր վարմունքին, նորա սեղհական ձեռքով բերուած մէջտեղ գրած նախաճաշիկին, այդ բոլորը երբ վեր առաւ, վէր գրեց Կրպօն՝ եկաւ այն եզրակացութեան, որ «այն խեղճ երեխայից, որ ստկայն հօթ վարդապետից խելօք է, իրան եթէ օգուտ էլ չգայ, վնաս չի կարող գալ». այդ մտքին հանգաւ Կրպօն և վճռեց բանալ վարժարանն իւր սիրտը, բացի միայն իւր արիւնա գաղտնիքից, և բռնեց նորա մօտ գնալ գալ։

Այդ բաներից, ինչ որ Կրպօն յայտնեց իւր խօսակցութեանց մէջ ուսուցչին, շատերը դուք լրագրներում, զրոյցներում կարդացել էք. իսկ ուսուցչի խօսածներից մասնաւորապէս Կրպոյի համար, նաև մեզ համար, աւելի հետաքրքրական էր հետևեալը։ Ուսուցիչը հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն լրագրներ էր ստանում Պօլսից և մի մի հետաքրքրական մատչելի հատուած կարդում իւր սովորական յանախորդ հիւր Կրպոյին. այդ հատուածների մէջ մի շատ անգամ կրկնուող և նորանոր մանրամասնութիւններով հաղորդուող լուր ամենից աւելի էր դարձրել իւր վրայ ուսուցչի էլ ուշադրութիւնը, իսկ Կրպոյինը աւելի ևս...այդ՝ Մօլլա-քէշիշի սպանութեան մեծ լուրն էր...

Ինչ՞ր ասեմ՝ չէ գրուած այդ մասին լրագիրներում. էլ «Մօլլա-քէշիշին գողերն են սպանել, որովհետև նորա գոյքը յափշտակուած է», էլ «նորան նոյն իսկ իւր տան ծառաներն են սպանել, որովհետև նոցա մօտ է գտնուած մօլլայի թանկագին իրեղէններից շատերը, և այդ պատճառաւ նորա բանտարկուած են...». էլ «այդ յանդուգն եղեռնագործութիւնը գաւառների ծածուկ ընկերութեան գործն է...», էլ «այդ մի վրէժ է մօլլայի սիրահարական յաջողութիւններից մէկի կամ միւսի փոխարէն...»։ Մի լրագրի ասածը միւսը ջնջում էր և այդ ջրի մէջ իւր կողմից մի նոր քաղ դնում լողալու։ Ինչ ասել կուզի, որ ամեն մի ազգութեան կամ ուղղութեան լրագիր իւր ուզած ենթադրութիւններն էր անում այդ իրողութեան մասին և իւր հաւանած բացատրութիւնները տալիս. հայ լրագիրներից մեծագոյն մասը պնդում էր, որ այդ եղերական վախճանն ամենայն հաւանականութեամբ հետևանք պիտի լինի սպանուածի մասնաւոր խառնակեցնաց կեանքի։ Թուրք լրագիրներն, ընդհակառակն, աշխատում էին հաստատել, թէ այդ անտանելի սճիրը հաւատի, քաղաքական համոզմանց հետ կապ ունի, և թէ «անմեղ նահատակի արիւնը մինչև Ալլահի աթոռի պատուանդանի մօտ նստած Առաքելի՝ Մուհամմէդի ականջն է բողոքում և դատ, արժանի պատիժ պահանջում...»։ Այդ լրագիրներից մէկն այնքան հեռու էր գնացել, որ իւր սրտակից սրտակուռ մթերուած թոյնը հայերից անց էր կացրել, շաւռ տուել արտասահմանեան «գեաուրների», կամ ինչպէս

ղանց վերաբերութեամբ՝ ունեցած խնամքի համար, սակայն նա անչափ յուզմունքից գրութեան այն տեղի վրայ, ուր նա հրաժեշտի ողջոյնն էր տալիս ուսուցչական խմբին ու իր երախտագիտական զգացմունքը յայտնում, կանգ առաւ ու անկարող եղաւ շարունակելու։ Օրիորդը փորձ էր փորձում զսպելու իր յուզմունքը, սակայն անկարող էր։ Անչափ զգացուած ու յուզուած օրիորդի դաժինն էր հասարակութեան բուռն ծափահարութիւնը։ Ընթացաւարտներին արուեցան աւարտման վկայագիր և յաւաջադիմներին մրցանակներ - գրքեր։ Հանդիսի վերջը զարդարում ի ցոյց դրուած ձեռագործները ի վաճառ հանուեցան։ Վր.

* * *

ԴՈՂԼԷԹ, (Թիֆլ. գաւ.) 17 յունիսի.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Մեր գիւղն ունի մօտ 300 տուն ժողովուրդ, երկու քահանայ, մի եկեղեցի։ Ուրիշ գիւղերի հետ համեմատելով Դաղլէթը բաւական ապահով դրութեան մէջ է. օրը լաւ է, ջուրը նոյնպէս։ Ժողովուրդը գաղթել է Խաչէնու գիւղերից Հաջալեանների առաջնորդութեամբ. քաջ և աշխատասէր են։

Մեր գիւղում գլխոց չկայ և խիստ դժուար է դրա պակասութիւնը։ Եկամտի այնքան միջոցներ կան, որ միգուցեան գլխոց դիրութեամբ կը պահուի։

Միջոցները հետեւեալներն են. եկեղեցին ունի 2000 ռ. մայր գումար. գիւղում կապալով տրուող կրպակներից ստացւում է 400—500 ռ., Խրամ գետի օշխներից 100 ռ.։ Բացի այս աղբիւրներից ժողովուրդը այնպէս ցանկանում է գլխոց ունենալ, որ ամեն կերպ կը նպաստի. մնում է միայն որ թեմական տես. հ. Մելիքացը իր խոստման համաձայն այս ամառ մի անգամ շնորհ բերէ մեր գիւղը։ Գլխոցի շէնքը մի տարուայ մէջ գլուխ կը գայ. ամեն նիւթերէնը արդեն է. կը գտնուին մարդիկ որ մինչև շէնքի աւարտուելը իրանց տուն ձրիաբար կը տան գաստարանի համար (կան էլ այդպիսի անձինք)։ Միայն պէտք է հայր տեսուչը փութով հոգ տանէ, գլխոցը բացուի մեր գիւղում, ուր հարիւրաւոր աղջիկ ու աղայ անդիր ու անուսում թափառում են։

Այս տարի մեր դաշտերի մնասիլը— բերքը շատ լաւ է. աշխատանքը եռ է գալիս, ոչ ոք չկայ դիւղում պարապ, ամենքն էլ իրանց վարի, ցանի, հնձի ու փնջի եռանից են։

Անցեալ օրերը գիւղի դէմը դաշտում մի ջահել 18 տարեկան հարսի օձը կը-ծել էր։ Թեթև խայթոց էր զգացել կոճի (թորուխ) մօտ, օձին չէր տեսել. յետոյ նկատել էր որ խոտերի միջով մի բարակ ու օձ փախչում է։ Մինչև գիւղ հասնելը, հանգ ու հունգ անելը թոյնի ներգործութիւնից սաստ ուռչում է Թան ն քսում, ածլով կտրում ոլոգի (կտրի) փոքրիմիսը, չի օգնում. ամենից վերջը հրաւիրում են աղօթողին...

Այս շաբաթ մեր գիւղը հասաւ Թիֆլիզի ուսուցիչներից պ. Սարգիս Քամալեանցը ընծայարանի աշակերտ Վ. Ե-Վ-ի հետ։ Պարոնի ճանապարհորդութեան նպատակներից մին էր այցելել Զամշուդայի հնադարեան բերդը և պատմներից, ծերերից պատմական տեղեկութիւններ, բանաւոր զրականութեան փշրանքներ հաւաքել։ Բոլոր ու Դաղլէթ գիւղերի հիմնարկութեան մասին խօսք ու զրոյց ունեցաւ մի 110 տարեկան պառաւի հետ, որ դեռ այնքան ժիր է, որ գուլբա է գործում և տատն է այն քաջասիրտ Աբրահամի, որ սպանուեց մի քանի տարի առաջ Կարսի նահանգում։

Ո՞ւր էր թէ հայ ուսուցիչներից շատերը օրինակ առնելով կարողանային. ամառնային ամիսները այնպէս արդիւնաւոր գործադրել, ինչպէս «Արձագանքի» աշխատակից պ. Ս. Քամալեանը, որ իւրաքանչիւր ամառ ոտով թէ ձեով պարտուել, ուսումնասիրութեան նիւթ է չինել մեր հայ վանքերը, հինօրեայ բիրդերը, գաւառներն ու ժողովուրդները իրանց աւանդութիւններով հանդերձ։

Խաչենցի։

* * *

ՂՈՒԼԱՒԷՐԻՑ գրում են.— Մեր գիւղի հունձքերը այս տարի մի ամսով ուշացան։ Ամեն տարի այս ժամանակ արտերի մեծ մասը հնձուած էր լինում. բայց այժմ գարու հունձը նոր պէտք է սկսուի։ Պատճառն այն էր, որ մարտ, ապրիլ անձրեւային էր, մայիսն էլ խիստ սառը։

Արտերը լաւ բերք են խոստանում։ Արտաւէրը այս ու այն փողաւէրից հնձավարձ վերցնելու վրայ է, որովհետև ունեցած միջոցները սպառուել են. նրա եկամտի տոկոսներն են ցորենն ու գինին, գեւ ոչ մեկի հասոյթի ժամը չէ հասել։ Գիւղացին ոչ մի ամսում այնքան փող կարիք չունի, ինչպէս յունիսին, և ամեն կերպ պէտք է օգնել, որ նա այդ ճգնաժամը գիւրութեամբ անցկացնելով վաշխառուների ճանկերում չհարստահարուի. հանգամանքն այս այժմ գաւառական վարչութիւնը ստանուելին պատուիրել է կիսամեայ մախսէն (տարկը) ժողովել և շուտափոյթ գանձարանին հասցնել։

Մեր կարծիքով դա սխալ պէտք է լինի, որի ուղղել տալը անուշտ մեր գիւղի հասկացող տանուտէրի իսկական պարտականութիւնն է։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Պ. Դիլօնը Թիֆլիզ եղած ժամանակ ցանկացաւ մեր վաճառականից կերպաս մի կտոր գնել հագուստի համար, այդ հանգամանքը առիթ տուեց մի խումբ մարդկանց զանազան ամբաստանութիւններ բանալ իմ վաճառականի վերաբերմամբ. այդ լուրերը հասած լինելով և պ. Դիլօնի ականջին՝ շտապել է մի նամակով յանուն մեծ. պ. բժշ. Բ. Նուսսարդեանի՝ հերքել այդ լուրերը, որպիսի նամակի իսկականն ուղարկելով Ձեզ՝ խնդարհարար խնդրում եմ տպել Ձեր պատուական լրագրի մէջ։

Գրիգոր Մելքիկեանց։

Австрія, Баденъ (Вѣна)
7-19 Іюня, 1895 г.

Многоуважаемый
Багратъ Абрамовичъ,

Узнавъ о томъ, что разные городскіе слухи обвиняютъ фирму г. Мелькикова въ томъ, что она или продала мнѣ московскую матерію за китайскую чи-чунъ-ча, или же взяла съ меня гораздо больше, чѣмъ слѣдовало бы, я считаю своимъ долгомъ заявить Вамъ, что эти слухи образовалисъ безъ моего вѣдома. Такъ какъ я одинъ купилъ у г. Мелькикова упомянутую матерію, я одинъ могу сказать на сколько эти обвиненія основательны.

Потому то я Васъ увѣряю, что купленная мною у г. Мелькикова матерія — дѣйствительно китайская, и кромѣ того, цѣна, за которую онъ ее продалъ,—умѣренная, и что было бы вопіющей несправедливостью продолжать распространять или вѣрить слухамъ, которые не только лишены основанія, но и прямо противоположны фактамъ.

Сообщите, пожалуйста, г. Мелькикову содержаніе этого письмеца и прибавьте, что когда мнѣ опять понадобится настоящая китайская матерія (чи-чунъ-ча), то я непосредственно обращусь къ его фирмѣ, къ которой я имѣю полное довѣріе.

Уважающій Васъ
Э. Диллонъ.

Ա Զ Դ

Խմբագրութիւն խնդրում է «Արձագանքի» բաժանորդներին, որ հասցէն փոխելու դէպքում ան պ ա տ ճ ա ռ յայտնեն իրանց առաջուան հասցէն և միևնոյն ժամանակ ուղարկեն նոր հասցէի տպագրութեան համար 50 կոպէկի փոստային մարկա. հակառակ դէպքում բոլոր գրուած նամակները կը մնան առանց ուշադրութեան։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՆ, մայիսի 16.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Վերջապէս մայիս 4-ին վերջ գրաւ Պօղոսպ-բասէնի կնճռոտ խնդիրը, որ ամիսներով՝ ի վեր առանց հարց ու փորձի երեսի վրայ ձգուած՝ կը մնար։ 18 հոգի անտարտ արձակուեցան, 6 հոգի երեք տարի բերդարգելութեան ենթարկուեցան, Նախնեան Խաչատուր 5 տարի՝ (Նախնեան լինելու յանցանքով...)։

Պօղոսպ-բէյի դէմ Պօղոսի եղբայրը մահուան վիճակի մէջ կը գտնուի, իսկ դէս Պօղոսի ցաւալի մահը արդէն նկարագրած եմ առաջի նամակս *)։

Մայիս 4-ին Պահրի փաշան իր քով կանչելով առաջնորդական տեղապահ Արժ. Սահակ վարդապետ և մեծամեծ էֆէնդիներ, պահանջեց որ իր ներկայացրած հանրագրութիւնն առարգրեն, ցոյց տալու համար իրենց հաւատարմութիւն, երկրի անդորրութիւն և արտաքսմանի հայերի պատարակելի ընթացքը. բայց Սահակ վարդապետ մերժեց, յայտարարելով թէ այդ բանը Պատրիարքարանից արգելուած է իրեն, մեծ էֆէնդիներն էլ նոյա օրինակին հետեւեցան։

Մայիս 5 անգլիահպատակ հայ թղթակից մը, իր 14 դինակիր ձառներով Պարսկաստանի սահմանին անցնելով Վան գնացած ժամանակ հիւր կը լինի Եղդիների գլխաւոր «Խաթոյի» տանը, ուր պատահարար կը գտնուէին քանի մը հատ ասորականներ. վերջինքս երբ կը տեսնեն եւրոպական շորերով մի մարդ և 15 դինակիր գիւղացիք, կը կարծեն թէ իրենց կառավարութեան երգած հայ գաղթականները ասոնք պիտի լինին, անմիջապէս կը ձերբակալեն և Վան կը բերեն ճանապարհին սոսկալի չարչարանքներ ու նեղութիւններ տալով. և ցարդ քանի կը մաշուին, հաղարակ թղթակցի ցոյց տուած ան ցաւերին և զօրաւոր փաստերին։

Օրերս Ծովտան գիւղի քով երկու գարվեշ հանդիպելով մի հայի կը կողոպտեն զայն, յետոյ սուրի հարուածով մը ազիրներ դուրս կը թափեն և շնչասպառ քարար վազելով կուսակալութեան խնայ կուտան թէ հայ կազմներ, ճանապարհին իրենց հանդիպելով, ուզած էին իրենց սպանել, բայց իրենք մեծ մարդարէին շնորհիւ յաջողած էին անոնցմէ մինն սպանելի և քարար փախչել։

Կառապան Խաչիկ, Այգեստանէն քարար երթալու ճանապարհին, երկու թիւրք իր կառքի առաջ կլորելով խէնչէլի հարուածով մը կը վիրաւորեն զինը։

Քիւրդերը զուարճանալու համար, Զատանի մէջ Մարկ անուն գիւղացի մը կը վիրաւորեն։

Վարդ։

1895 թ. մայիս 16.
Վան.

ԱԼԱՇԿԵՐՏ, 5 յունիս.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Այս օրերս կառավարչական շրջանի մէջ մի շատ ուրախալի լուր տարածուեց և անմիջապէս արձագանք գտաւ հասարակութեան մէջ։ Այդ այն է, որպէս թէ մօտերքս, սուլթանի խոստացած մի նիրման հանձայն, բանտից ու աքսորից, ուր վտարուած են բազմաթիւ անձինք, պիտի ազատուին՝ ի միջ այլոց նաև գաւառիս դատապարտեալները։ Այս լուրը, որ իր հաւատացնելու չափ մի կարգ նշաններ ևս ունի, սակայն հպատակի դժբաղդութեան մերձաւորութեամբ ճանաչելով Թիւրքիան, կը դժուարանար այսօր ոչ միայն հաւատալ նորան, այլ նաև ապագայ բարեկարգութեան վերաբերեալ այն բոլոր խօսածները, որոնք որպէս թէ պիտի կատարուին սուլթանի բարեհայեցողութեամբ՝ մինչդեռ նորա միայն քրիստոնէութիւն ուսադեցուցիչ ունին մեզ մօտ։ Արդեօք, մի հարց կուգայ, վերջ ի վերջոյ ինչ գործնական արդիւնք ունեցան այն բոլոր խոստմունքները, ինչ որ Թիւրքիան, նոյն իսկ եւրոպացոց գիտութեամբ, իր ժամանակին պարբերաբար տուաւ Զէյթունի, Կարնոյ, Էնգիւրիայի, Մարաշի, Եօզգատի և այլ տեղերում՝ իր ու իւրայիններով ձեռքով ու պետութեամբ. տեղի ունեցած ապտալի դէպքերի վերաբերմամբ։ Մինչ այս բոլորի նկատմամբ ներկայիս ևս առաջ խօսքերը, վէճերը, երկար բորբոքուած յօդուածներ տեղի չունեցան, նոյն զրկոյցը աւելի ուժգնագոյն շարժարարցրեց մամուլը։ Իսկ հետեւանքն ու գործնական արդիւնքը...

Ժողովուրդի շուրջ կատարուած այսպիսի խաղերին բարմիցս դժբաղդ ակնատեսն եմ եղեր։ Տեսեր եմ, որ Թիւրքիայի տուած խոստմունքները միմիայն թղթէ ամրոցների չափ հիմք ու կայան են ունեցեր։ Մասամբ այն էլ գիտենք, որ Թիւրքիան Եւրոպայի միջամտութեան մասին հաւաստիացած է, որ բաւ կը լինի նորա համար, եթէ քաղաքական աշխարհից մի փոլիտիքական հով փչէ և նորան կայ խառնուի նաև իւր ի նպաստ Եւրոպային յայտուցած մի անհնար խօսք ու խոստմունք։ Եւ այն ժամանակ ամենքնչ, համոզուէր է նա, ոչ միայն ըստ աւաջնոյ, այլ մի աստիճան ևս առաւել կընթանայ իւր նախընթաց ուղիով։ Եւ արդարև, ինչպէս ցոյց կուտան մեզ բազմաթիւ օրինակներ, ինչպէս կը հաստատուէ զայդ նաև պատմութիւնը, այդ անօրէնութիւններով մոլիացած ազգը հանապազ օգտուեր ու իւր կատարուած սխրագործութիւնների մէջ քաջալերուեր է առ հասարակ սանարիան եւրոպացու մուացկոտութիւնից, անփոյթութիւնից...

Ահա անցածի այս դառն իրողութիւններ այսօր արդէն մատամբ կատարուած խոստմունքների մասին մեզ երկրայ վիճակի կ'ենթարկեն և Թիւրքիայի իւրաքանչիւր նուիրական խոստմունքն անգամ զրոյի կը հաւասարացնեն։

Ուրախութեամբ սրտի սգոսուելով մեր ապաքախտ տարապրուածների ու բանտարկուածների ցանկալի այդ ազատութեան լրով, կը շտապենք արձանագրութեան առնել հայրենեաց այդ նուիրականացած անուանացուցակ ըստ քաղաքի և գիւղի դասաւորութեան։

ա. Թոքրա-կալէ, որ է գայմակամանոստ քաղաք, 1) Թադէոս ազա Գրիգորեան, 2) Աւետիս ազա Գրիգորեան, 3) Բարսեղ ազա Զաքարեան, 4 Գրիգոր ազա Սուքիասեան, 5) Յովհաննէս էֆէնտի Մուրադեան, 6) Սարգիս էֆէնտի Մուրադեան (եղբայրներ), 7) տեղւոյն Հայոց Միացեալ Ընկերութեան վարժարանի ուսուցիչներէն Մշեցի Դէորգ էֆէնտի Մարդպետեանի, 8) Խուլթիկցի Տուզուխեան Յարութիւն էֆէնտի, 9) նոյն տեղի գաղոցի տնօրէն-ուսուցիչը, 10) Աբրահամ Բրկէեան, 11) Սահակ ազա Գրիգորեան (անյայտացած յայտնի իշխան Նազարէթ ազայի հօրեղբայրը), 12) Սարգիս Պետրոսեան, 13) Բարսեղ Մանուկեան, 14) Անմատցի վերաբնակ Թոքրա-Կալէ Հազրօ Մերտպետեան, 15) Աւետիս Պետրոսեան, 16) Պետրոս Բոյաճեան. վերջինս չկարդանալով տանել բանտային տանջանքները կրօնափոխ եղաւ, 17) Նահապետ վարժապետ Զահինեան, 18) Համբարձում Զահինեան և 19) Վաղարշակ Տէր-Յարութիւնեան՝ այժմ աքսորուած Աբիայի Շամ-Տրիպոլիս նահանգ։

բ. Անմատ գիւղի 1) Մելիք ազա Գանտիլեան, որ բանտի մէջ կնքեց իւր բազմատանջ կեանքը, 2) Յովան ազա Գանտիլեան, տաղաջնոյն եղբայրը, և 3) գիւղի Պուլ վարժապետ։

գ. Խաչէրու գիւղի 1) Օխէչեան ըէյս Պետրոս և 2) Բարսեղ տնուտէր մի երիտասարդ։

քարը և չատ թուլակոծիկին այնպէս խրփել, որ չորքոտանին մինչև անգամ պարան էր եկել, բայց էլի մի կերպ ոտի էր կանգնել ու կաղկանձելով փախել։ Սակայն այդ «ցուցումը» դատաւորներին «հեքիաթ» էր թուացել, մանաւանդ որ մարդ էլ ուղարկել, գնել էին տուել շան կողքը, բայց ոչ վերք էին գտել, ոչ իսկ արեան հետք։ Այն ինչ շան տէրն էլ իւր երեխաների և կնոջ բերանից յայտնել էր քննիչներին, որ իրանց շունն այն օրը պէտք է որ մեռ ծեռ կերած լինէր, կաղկանձելով եկել է բակը վայր ընկել, ինչ որ տուել են, չի վեր կացել տեղից, իւր տեղումն է կերել ու հետո էլ շարունակ իւր կողքն է լիզել։ Բայց շան տիրոջ վկայութիւնը չէր ընդունուել, որովհետև նա քրիստոնեայ էր։ Չէր ընդունուել նաև դատապարտեալի ցոյց տուած աւելի քան տաս հարեւանների վկայութիւնը, որոնք իրանց աչքով տեսել և պատմում էին իրանց զրոյցի արհեստաւորի՝ վիրաւորուած ձեռքով շանը քարի հարուած տալու բոլոր մանրամասնութիւնը. նոցա ցուցմունքը ոչինչ էր համարուել, որովհետև նոյնպէս քրիստոնեայ էին։ Թաղը հայի թաղ էր։ Գտնել էին սպանուածի բանտարկուած ներքինուն, նրան ցոյց էին տուել բռնուած արհեստաւորին, հարցրել՝ «սա է քո ասած՝ ծածկած երեսով մարդը, որ գիշերով եկել, սպանել է տիրոջդ». նա էլ՝ առաջ չհասկանալով բանն ինչումն է, ասել էր՝ «սա չէ», յետոյ, երբ իմացել էր բանի էութիւնը, շուտ էր տուել, թէ՝ «սորա նման էր»... Գործը քանի գնում՝ մեծանում էր մինչև դատաւորներից մէկը մի հանճարեղ միտք ծնեց Սողոմոնի դատաստան անել. նա հեռացրեց ատեանից դատապարտեալին էլ, վկաներին էլ և հրամայեց կանչել...ծեծուած շանը. ասաց՝ «եթէ յիրաւի շունը քարի հարուած է ստացել այս գեաւուրից, նորան տեսնելուն պէս պոչը կը սեղմի, կը կծկուի և կաշխատէ փախչել...»՝ բերեցին շանը ներս... Շունը՝ ոչինչ, իրա համար կանգնած է, բայց հենց որ հարեւան սենեակից դուրս բերին ծանօթ արհեստաւորին, շունը պոչը փոշն արեց ու մնդստալով դէպ դէպի դուռը...Անենքը ծափ տուին՝ բարձրաձայն աղաղակեցին, մեկնութիւնը պարզ էր։

Արհեստաւորին աղատեցին, շան վրայ գանգատութիւն տուին համարուեցաւ քան տասներկու քրիստոնեաներինը... Այդպիսի անմեղ բանտարկեալների թիւը, մէկ չէր, երկու չէր, երեք չէր. իսկ նոցա քննութիւնն ու դատաստանը՝ քո թշնամին չտեսնի. կարծես Թեմիդէն՝ իւր աչքերը կապած լինելու դէմ բարկացած՝ արդարադատութեան կշռի թասերը կարել ու սոսկական մնացած լրծակով կատաղի հարուածներ էր տալիս աջ ու ձախ, ում գլխին կրպատահի և չէր ուզում դադարել, մինչև մէկի արիւն շթափէ։ Կրպօն լսում էր արդարների մեղադրութեան այդ լուրերը և խոցոտուած սրտով վերադառնում էր տուն։ Քանի քանի անգամ նորա մտքից տուել թողնել ամենայն ինչ, գնալ Պոլիս, անձնատուր լինել դատաւորներին, ասել՝ «ես եմ ձեր որոնածը, անմեղների արիւնը մի թափէք», բայց մի անորոշ զգացմունք, որ խուսն էր ահից, յոյսից, ինքնապաշպանութեան բնազդումից, պահում էր նորան այդ քայլից։ Օրեր էին լինում, երբ նորան անասելի յուսահատութիւն էր ձեռք տալիս. նորան թուում էր՝ թէ այսօր է, վաղն է՝ կը բռնեն նորան և ասեր քը չգթացած կ'ուղարկեն Պոլիս։ Քննութեան մէջ մարդասպանի մի քանի իսկական նշանները պարզուել էին. ասում էր՝ որ նա բարձրահասակ էր և ահագին ոյժի տէր, անենչան խօսք ու խոստմունք։ Եւ այն ժամանակ ամենքնչ, համոզուէր է նա, ոչ միայն ըստ աւաջնոյ, այլ մի աստիճան ևս առաւել կընթանայ իւր նախընթաց ուղիով։ Եւ արդարև, ինչպէս ցոյց կուտան մեզ բազմաթիւ օրինակներ, ինչպէս կը հաստատուէ զայդ նաև պատմութիւնը, այդ անօրէնութիւններով մոլիացած ազգը հանապազ օգտուեր ու իւր կատարուած սխրագործութիւնների մէջ քաջալերուեր է առ հասարակ սանարիան եւրոպացու մուացկոտութիւնից, անփոյթութիւնից...

Ահա անցածի այս դառն իրողութիւններ այսօր արդէն մատամբ կատարուած խոստմունքների մասին մեզ երկրայ վիճակի կ'ենթարկեն և Թիւրքիայի իւրաքանչիւր նուիրական խոստմունքն անգամ զրոյի կը հաւասարացնեն։

Ուրախութեամբ սրտի սգոսուելով մեր ապաքախտ տարապրուածների ու բանտարկուածների ցանկալի այդ ազատութեան լրով, կը շտապենք արձանագրութեան առնել հայրենեաց այդ նուիրականացած անուանացուցակ ըստ քաղաքի և գիւղի դասաւորութեան։

ա. Թոքրա-կալէ, որ է գայմակամանոստ քաղաք, 1) Թադէոս ազա Գրիգորեան, 2) Աւետիս ազա Գրիգորեան, 3) Բարսեղ ազա Զաքարեան, 4 Գրիգոր ազա Սուքիասեան, 5) Յովհաննէս էֆէնտի Մուրադեան, 6) Սարգիս էֆէնտի Մուրադեան (եղբայրներ), 7) տեղւոյն Հայոց Միացեալ Ընկերութեան վարժարանի ուսուցիչներէն Մշեցի Դէորգ էֆէնտի Մարդպետեանի, 8) Խուլթիկցի Տուզուխեան Յարութիւն էֆէնտի, 9) նոյն տեղի գաղոցի տնօրէն-ուսուցիչը, 10) Աբրահամ Բրկէեան, 11) Սահակ ազա Գրիգորեան (անյայտացած յայտնի իշխան Նազարէթ ազայի հօրեղբայրը), 12) Սարգիս Պետրոսեան, 13) Բարսեղ Մանուկեան, 14) Անմատցի վերաբնակ Թոքրա-Կալէ Հազրօ Մերտպետեան, 15) Աւետիս Պետրոսեան, 16) Պետրոս Բոյաճեան. վերջինս չկարդանալով տանել բանտային տանջանքները կրօնափոխ եղաւ, 17) Նահապետ վարժապետ Զահինեան, 18) Համբարձում Զահինեան և 19) Վաղարշակ Տէր-Յարութիւնեան՝ այժմ աքսորուած Աբիայի Շամ-Տրիպոլիս նահանգ։

բ. Անմատ գիւղի 1) Մելիք ազա Գանտիլեան, որ բանտի մէջ կնքեց իւր բազմատանջ կեանքը, 2) Յովան ազա Գանտիլեան, տաղաջնոյն եղբայրը, և 3) գիւղի Պուլ վարժապետ։

գ. Խաչէրու գիւղի 1) Օխէչեան ըէյս Պետրոս և 2) Բարսեղ տնուտէր մի երիտասարդ։

թէ նորա խօսուածքը մշեցի հայի արտասանութիւնն ունէր։ Այդ ցուցմանց վրայ արդէն բռնուած, բանտարկուած ու դատի էին ենթարկուած երկու վիճաբի հայ մշեցիներ, որոնցից մէկին Կրպօն էլ լաւ ճանաչում էր, դա՝ տասնուհինգ փթին բեռ չատող Մթօն էր, մշեցի մշակների ընտրովի պետը. . . Խնդրա Մթօ, նա թէև ակնյայտի կերկերալով պատասխանել էր իւր անմեղութիւնը վկաներով հաստատելով՝ որ ինքը եղեռնագործութեան գիշերը իւր անկողնում քնած է եղել, բայց երբ իւր հարիւրաւոր բեռնակիցների վկայութիւնը չէր ընդունուել, անզգուշութիւն էր ունեցել գուալու և հայհոյանք թափելու նեղքինու վրայ, որի համար մէկ լինելով թէ գեստուրներից ով կը կորչի, միայն թէ ինքն ազատուի, Մթօյի հրակայական հասակն ու կռները տեսնելուն պէս՝ ասել ու ելին կանգնել էր՝ թէ «սա է, որ կայ»... Մթօյի բարկութիւնն աւելի ևս այժ էր տուել չարախօսի ատամին։ Դատաւորները հետաքրքիր զուտ տաճկական միջոցին էին դիմել. առաջարկել էին թէ Մթօյին, թէ նորա բոլոր ընկերներին՝ «եթէ ուզում էք անմեղ մարդ չկորչի, ինքներդ ցոյց տուէք կամ բերէք մեզ մօտ բոլոր բարձրահասակ ուժեղ մարդկանց, որոնց վրայ կասկած կարող է լինել». նոյն պատուէրն էր տրուած նաև գասլթիաներին...

Կրպօն յիշում էր իւր Պոլսից դուրս գալու հեղեղարձուսա-գէպքը և մտատանջուում. նորան թուում էր թէ անկարելի է, որ նորան կասկած չառնեն, մուսանն ու հանգիստ թողնեն. «այդ հօ թափած արիւնն էլ չի թոյլ տալ» ասում ու չէր դադարում կրկնել նորան իւր խիղճը։ «Գոնէ շատ լինի, ինչ որ լինում է». այդ էր նորա անձկութեանց վերջինը...։ (Կը շարունակուի)

դ. Խաստուր գիւղի 1) տանուտէր Մխօն, 2) ըէյս Լեէյլի Ցուսէր, 3) Բասմաճեան Ցակոբ, 4) Բասմաճեան Ուշակ (եղբայրներ), վերջինս աքսորուած է Հռոդոս կղզին, 5) ըէյս Սարգիս և 3 (6, 7, 8-րդ անձինք) ևս մեռան բանտի ու նախապէս կրած տանջանքների մէջ։

ե. Զէդկան գիւղի 1) Քէշիշ օղլու ըէյս Աբրահամ։

զ. Խայաբէկ գիւղի 1) ըէյս Աւէն։

է. Բլուր Եղնթափա 1) ըէյս Յովհաննէս։ Այս երբ առաջին անգամ ազատուեցաւ հնգամեայ բանտարկութիւնից կառավարութիւնը այս անգամ վճռեց ընտանեօք հանդերձ աքսորել նորան, որի համար նա մի գիշերով անյայտացաւ իւր ծննդավայր գիւղից։

Այսպէս ուրեմն՝

1) Թոփրա-կալէն ունի 18 բանտարկեալ և 1 Զամ-Տրիպոլիս աքսորեալ, ընդամենը—19.

2) Անմատ գիւղ՝ 3.

3) Խաչու՝ 2 բանտարկեալ.

4) Խաստուր՝ 4 բանտարկեալ, 1 Հռոդոս կղզին աքսորեալ և 4 ևս բանտի մէջ նահատակեալ՝ ընդամենը—9.

5) Զէդկան՝ 1.

6) Խայաբէկ՝ 1.

7) Բլուր—Եղնթափայն 1։ Բոլորն 'ի միասին առած կ'ունենաք 34 բանտարկեալ, որոնցից 4-ը մեռած են և 2 աքսորեալ։

Անցեալ օրեր, ինչպէս Բասէնից այնպէս ևս մեր գաւառից տեղային իշխանութիւններ ձերբակալելով, վերստին դէպի Ռուսիա վերադարձրին երկու խումբ գաւառացի երիտասարդներ, որոնք նոր էին վերադարձած պանդխտավայր Ռուսաստանից և անբաւ կարօտով կը ցանկային գնալ իրանց հայրենի տունները։ Տեղւոյն իշխանութիւնը ձերբակալեց նոցա գլխաւորապէս այն պատճառով, որ նորա օրինական անցագիրը չունէին։ Չնայած որ տարաբաղդ հալածականները ճգնեցան համոզել իշխանական անձանց, որ իրանք բանիցս փոփոխած են եղեր Թիֆլիզի, Բաթումի, Փօթայ և Կարսի Թուրքիայի ներկայացուցիչ հիւպատոսներէն անցագիրը խնդրել, սակայն նորա յամենայն դէպս ոչ միայն անողոք են եղեր անցագիրը չտալու վճռի մէջ, այլև մեծամեծ անարգանքներով ևս մերժած և արտաքսած են նոցա իրանց ներկայութիւնից։ Վերադարձողների մասին ցարդ ոչ մի տեղեկութիւն չկայ։

Արդարև զարմանալի կարգադրութիւն։ Իշխանութիւնը փոխանակ իւրաքանչիւրի մասին իւր ծննդավայր գիւղի մէջ վերստուգելու կամ պատժելու իւր հպատակը, այսօր նորան իւր սեփական հողից դուրս արտաքսելու միայն մարին կը շտապէ. . .

Աւազակութիւնները կը շարունակուին անարգել կերպով։ Անձրևներ, որ անընդհատ կը տեղային, բաւական վնասներ պատճառեցին։

Շատ մը գիւղական պաշտօնէից, ազանների և նոյն իսկ հասարակ մահմեդականների մօտ, որոնք մասնակցեր են Սասնոյ կոտորածին, այսօր գնալով կը յայտնուին գերեվար Սասնոյ հիներ։ Դժբաղդաբար՝ ցաւալին այս է, որ գաւառները ոչ մի հայ ներկայացուցիչ չունին, որ այդ ու դոյնանման եղեռնագործութիւնների ներկայացմամբ փութան՝ իւր ժամանակին հարկ եղած տեղը բողոքել։

Աշաշկերտցի.

Ց. Գ. Նամակս արդէն փակած էի, երբ հաստատ լուր հասաւ, որ ռուսաց սահմանաբերանի վրայ, Վարդահեր Վանուց մօտերը գտնուած են սրերով ու սուիններով ջախջախուած 20 հայերի դիակներ։ Դեռ ենթադրութեամբ կը խօսացուի, որ դէպի Ռուսաստան վերադարձող պանդուխտներից կը լինին նոքա անպատճառ։ Նոյն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐԿՈՒՐԻ ՃԱՌԸ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

Նախարարութեան հրաժարման մասին լորդերի պալատում յայտնեց լորդ Ռոզբերին, իսկ համայնքների ժողովում Հարկուրը։ Ռոզբերին մի քանի խօսքով հաղորդեց գէպքը. լորդ Գրանբրուկն ընթացիկ գործերի մասին կարճ դիտողութիւն արաւ. ապա անցան հերթական խնդիրներին։

Համայնքների ժողովում Հարկուրն այսպէս խօսեց. «Քանի որ չեն առաջարկուած այն խնդիրները, որոնց մասին յայտարարուած է, ես պարտք եմ համարում հաղորդել մի բան, որով՝ կարծում եմ կը յետաձգուին խնդիրները (ծիծաղ)։ Խօսակցութիւնը, որ տեղի ունեցաւ անցեալ ուրբաթ զինուորական նախարարութեան վարկի մասին, իսկապէս ուղղակի յանդիմանութիւն էր՝ ուղղուած պետութեան զինուորական վարչութեան առենապետին, որի համար ես կարող եմ ասել, թէ չի եղել նրանից աւելի ընդունակ, յարգելի և ժողովրդական նախարար (ծափահարութիւններ ողջոյ նստարանների վրայ)։ Հարկ չկայ ասելու, որ կառավարութիւնն իրեն անպայման պատասխանատու է համարում իւր յարգելի բարեկամ՝ զինուորական գործերի կառավարչի հետ։ Ընդդիմադիր կուսակցութեան պատասխանատու ներկայացուցիչների զգօնութեան եղանակը՝ զրկում էր պետական առենապետին զինուորական բիւջէն անցկացնելու հնարաւորութիւնից, իսկ կառավարութեան համար անհնարին էր դարձնում վարկ ձեռք բերել՝ երկրի հասարակական գործերը վարելու համար։ Այդ պատճառով կարիքեցը պարտք համարեց առաջին նախարարի միջոցով Թագուհուն հրաժարական ներկայացնել, որ և ընդունեց Նորին Մեծութիւնը։ (Լսեցէք, լսեցէք)։ Դրանից յետոյ նախարարները պաշտօնի մէջ կը մնան, մինչև յաջորդներ կը նշանակուին և այդ յաջորդները երկրի գործերը վարելու պատասխանատուութիւնը կրստանձնեն։ Տեղս նստելուց առաջ՝ յուսով եմ, ինձ թոյլ կը տաք դարձեալ մի քանի խօսք ասելու պալատին։ Հրաժարուելով ես թողնում եմ մի պաշտօն, որ պետական պաշտօնների մէջ միշտ աւելի պատասխանատուն է համարուել։ (Ընդհանուր ծափահարութիւն)։ Ես միշտ առաջնորդուել եմ այն ցանկութեամբ, թէ և՝ խոստովանում եմ, դրա համար իմ ուժերը բաւական չեն, (ընդդիմադիրների նստարաններից աղմուկ՝ «չէ», չէ»։) այն ցանկութեամբ որ այս վեհ պալատի նախնի արժանապատուութիւնը պահպանուի (ընդդիմադիրների ծափահար.)։ Բացառիկ և դժուարին հանգամանքների մէջ գտնուելով ես կարօտ էի նշանաւոր և անհրաժեշտ պաշտպանութեան։ Ուստի յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը այն ջենտլմէնների, որոնց հետ բարդ եմ ունեցել գործելու, որոնք իմ գործակցութեան ամրոյզ ընթացքում մշտական պաշտպանութիւն են ցոյց տուել։ Ես յանձնում եմ և իմ քաղաքական հակառակորդների ինձ ցոյց տուած սիրալիր յարաբերութիւնը յիշատակել (ընդդիմադիրների ծափահար.)։ Ես թոյլատրութիւն եմ խնդրում ասելու, եթէ անձնատատութիւն չի համարուի իմ նշանաւոր նախորդներից մէկի խօսքը կրկնել, որ պարլամէնտական կեանքի ամենի ընդհարումների մասնակցող մարդու փառասիրութիւնների մէջ ամենարարձր փառասիրութիւնը պիտի լինի ստորին պալատի հետ լաւագոյն յարաբերութիւնների մէջ լինել։ (Ընդհ. ծափահարութիւններ)։ Այդ ճառին պատասխանելով Բալֆուրն ասաց, թէ հրաժարուող նախարարութեան մասին ընդդիմադիր կուսակցութիւնը որպիսի կարծիք էլ ունենար, Հարդուրին միաձայն ստորին պալատի զարդն է համարում։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԴՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

Յունիսի 21-ից.

ՕԴԵՍԱ.—Հարեշտանի գեսպանները ներկայ էին այն փառահեղ զօրահանդիսին, որ կատարեց 15 հազար հոգուց բաղկացած զօրքը պատերազմական դաշտի վրայ։ Արքայազն Դամտէն, որ ձիու վրայ նստած էր զեկուցումները, սքանչացած էր. նրան առանձնապէս դուր եկաւ զաղախների ջիղիքը։

ՎԱՐՇԱՎԱ.—Առաւօտեան ժամանեց այստեղ գէպի Պետերբուրգ ուղևորուող բոլոգական պատգամաւորութիւնը, որ բաղկացած է 8 հոգուց, իրանց առաջնորդ ունենալով միտրոպոլիտ Պլիմէնտը։

ՎԻԵՆՆԱ.—«N. W. Tageblatt»-ը հաստատ տեղեկութիւնների հիման վրայ ասում է՝ այն դատապրութեան քննութիւնը, որ երեան եկաւ Կ. Պոլսի զինուորական դպրոցում, կատարվում է սաստիկ գաղտնի կերպով։ Բայց և այնպէս լրագիրը հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում այդ գործի մասին։

Այսպէս օրինակ՝ ուսանողների մօտ Լօնդոնում տարկիրէն լեզուով տրուած լրագրների №№-ին գտնուել, ուր քարոզվում է «երիտասարդ Թուրքիայի» ծրագիրը, ինչպէս որ իւր ժամանակին անում էր Միհդատ փաշան։ Վերոյիշեալ լրագիրները սաստիկ կծու լեզու են բանեցնում Թուրքիայում տիրապետող այժմեան կարգերի մասին։ Առանձնապէս ուշադրութեան արժանի է այն փաստը, որ շատ երիտասարդ սպաներ միացել են «երիտասարդ Թիւրքիայի» ծրագրին։

ՍՕՖԻԱ.—«Agence Balc.»-ը հաղորդում է, որ Մակեդոնիայի ապրստամբական շարժումների մասին ոչ մի տեղեկութիւն չկայ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Յունիսի 20-ից.

Վերջինի կուրս 3 տմսով։

Լօնդօնի վրայ 10 ֆ. ստ.	92,90
Բերլինի վրայ 100 մարկ	45,35
Փարիզի վրայ 100 ֆր.	36,75
Նոր կտրած պոլուիմպերիալները	7,40 գն. 7.40 վաճ.
Բօրսայի զեղջը	5-ից 7%
4% Պետական արժեթղթ.	99⅜
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	164½
5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	240
5% Երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ.	224
5% Ազնուական. հող. բանկի զրաւական. խաղատոմս.	210
5% Պետական երկաթուղու արժեթուղթ	101⅝
4% Ներքին փոխ. I սեր.	99¼
» » » II »	99¼
» » » III »	99¼
» » » IV »	99¼
4½% փոխ. 1893 թուական.	101
» փոխ. 1 հրատարակ.	100¾
» փոխ. 2 հրատարակ.	100¾
4½% Դրաւական. արժեթղթ. ազն. հողային բանկի.	101½
4½% Գիւղական հողային բանկի վկայագիրներ.	100½
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	101¼
» Մոսկուայի	101
5½% Օդեսայի	100
5% Թիֆլիզի	99⅝
5% Դրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի	100¼
» Պոլտավայի	99⅝
» Տուլայի	100
» Կիևի	100
» Մոսկուայի	100
» Բեսարաբիայի	100
» Ներքին Սամարայի	100
» Դոնսկոյ	99¾
» Վեպենսկի	100
6% և 5% Թիֆլիզի	101 և 99½ գն.
» Քուտայիսի.	101 և 99½ գն.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐՇԱՎԻՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻԿՈՎԱՆ—9 -10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՇՇԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց հիւանդութեան հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ, ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մաշկի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խիպի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՈԿՏՕՐ.

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՑԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Իւր բացակայութեան պատճառով ամառս հիւանդներին կ'ընդունէ դոկտոր Սամուէլ Շահ-Պարոնեանցը նշանակեալ ժամերին։

Բացի գեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամէն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինարմատներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { աղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկարարձ-մասնագէտ անող կին և մասաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում զիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս զիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական Ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, զիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամից 7-ը մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ

Ա. Ի. ՇՇԵՐԲԻՆԻՆԱ

Ընդունում է հիւանդներին ամէնայն օր առաւօտեան 9—11 ժ. և երեկոյեան 5—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ, տուն Ակիմովի։

«Կենդրոնական զրամաճառանոցում»
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
մեծաղիր, չքեղ՝ պատկերազարդ հրատարակութիւն 1860 թ. տպած Վենետիկ. փառաշուք. գինն է 25 ռ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲԱՂԱՆԻՔ,
ԼՈՂԱՐԱՆ և ՋՐՑԻՐՆԵՐ

Սօլօլակ, Սադովայա փողոց, տուն ՔՈՉԱՐԵԱՆՑԻ

Պատիւ ունիմ յայտնել յարգոյ հասարակութեան, որ ես կապելով վերցրել եմ Սօլօլակի ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲԱՂԱՆԻՔԸ և մտցրել եմ նորա մէջ հիմնական բարեկարգութիւն՝ հասատատելով այնտեղ օրինակելի կարգ ու կանոն, և մեծամեծ յարմարութիւններ օգտուելու ջրերից։

Բաղանիքին կից առանձնապէս, նոյն շինութեան մէջ, շինուած են լողարան (ванна) և ջրցիրներ (души) զանազան սիստեմի և ինչ ասիճանի տաքութեան կը կամենայ ցանկացողը։

Զորարկղի լողարանի (вана въ паровомъ ящикѣ) մէջ, ըստ բժշկի խորհուրդի, լուծվում է շոհի հիւթ (сосновый экстрактъ) և որ ունի կենսատու ներգործութիւն զանազան հիւանդութեանց, մանաւանդ քամիական (ревмотизмъ), բթացաւի (подогра) և այլն։

Բաղանիքում ցանկացողների համար կան տեղական հմուտ մերսող (массажистъ) և ուսեալ մերսող-կին (массажистка). բաղանիքում մտցրած են շքեղ սոլք ու կարգ, տիրում է անպայման մաքրութիւն և լաւ խրատմամբ լողացողներին։

Բակում, բարձր դարբասի վրայ, գտնվում է և պարտէզ հանգստանալու և օգտուելու լեռնային մաքուր օդից։

Բաղանիքը բաց է ամէն ժամանակ, գիշեր և ցերեկ։

Գները մատչելի են—օրինակ լողարանը արժէ 20 կ., ջրցիրը սառը—15 կ. տաք ջրերը—20 կ. բաղանիքը առանձին (особня) ժամը 60 կոպէկ, 80 կոպէկ և 1 ռուբլի։

Ի նկատի ունենալով, որ ջրաբուժութիւնը հետզհետէ տարածվում է՝ առանձին ուշադրութիւն է դարձրած լողարանի, շոքարկղի և ջրցիրների վրայ։

Պատասխանատու ՍԱՒԱՅ ՄԱՆՈՒԿՅԱՆՑ

(3—1)

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է

ԱՄԵՆԱՐԴԱՐՁԱԿ ԵՒ ԸՆՏԻՐ ՀԻՒՐԱՆՈՑ

ՕՐԻԱՆՏ
(Hôtel d'Orient)

Հիւրանոցը գտնվում է քաղաքի կենդրոնում, Գօլովինսկի պրոսպէկտի վրայ, պալատի հանդէպ, տուն Ն. Միքիմանեանի, որ առաջ տեղաւորուած էին դատաստանական տեղեանները։ Դեղեցիկ, բոլորովին նոր ՆՕՄԵՐՆԵՐ մէկ ռուբլուց մինչև տասնեւհինգ ռուբլի օրական. ամսով ըստ համաձայնութեան։

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԲԵՍՏՕՔԱՆ

Դահլիճ հասարակական հացկերոյթի համար։ Առանձին կաբինէտներ։ Ֆրանսական, ռուսական և տեղական խոհանոց։

ՃԱՇԵՐ, ԸՆԹՐԻՔՆԵՐ և ՆԱԽՈՒՃԱՇԻԿՆԵՐ և յատուկ պատուէրով։

Տեղական, արտասահմանի և ռուսաց գինիներ։

(30—11) Հիւրանոցի տէր՝ Ա. ՖՐԱՆՍԻՒՐՈ։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՕՐ"

Հարիւրամեայ հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ռ. ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. զրամագլխի, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարվ. 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող զրամագլխին ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում է ամէն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ Թիֆլիզում (Վլադիմիրովսկայա փ. տ. № 2) և զրաճակալութիւնների մէջ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հասարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Ալեքսանդր Գրիգորիի Իւանովի ընակարանում։ (100—18)

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Թարգմանութեամբ հրատարակուած են՝

	Ռ.	Կ
1. ՀՄԻԹԹ, Գրանկլին, 2-րդ տիպ. սպառուած.	—	—
2. « Վաշինգտոն, 2-րդ տիպ. սպառուած.	—	—
3. « Հոմերի Իլիականը, պատկերներով	1	—
4. « Հոմերի Ոդիսականը, »	1	20
5. « Ռէյնեկէ աղուէսը	—	60
6. ՍՄԱՅԼՍ, Բնաւորութիւն	1	50
7. « Ինքնօգնութիւն	1	50
8. ԱՄԻՉԻՍ, Սիրտ,	1	—
9. « Սպէնիներից մինչև Անդէրը	—	20
10. Ռուսոտմ և Զոհրաբ,	—	20
11. ՇԻԼԼԷՐ, Աւազակներ, ազատութիւն.	—	50
12. ՏՕԼՍՏՕՅ, Ռորինզոն, փոքրերի համար	—	20
13. « Կոլումբ, փոքրերի համար	—	15
14. ՀԱՅԶԷ, Բէլատրիչէ, վէպիկ.	—	30
15. « Նօնցայի բերդը, վէպիկ	—	30
16. ՎԱԼԴՆԷՐ, Հաւատարիմ Սավիտրին *)	—	10
17. ԻՐՎԻՆԳ, Մահմեդի կեանքը	1	20

Զուտով կը տպուի՝
ԴԻԿԿԷՆՍ, Դաւիթ Կոպպէրֆիլդ, երեք հատոր, անգլիերէնից։

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և Կենդրոնական զրամաճառանոցում։

*) Տպագր. հրատար. Ընկեր.

Дозволено цензурою, Тифлисъ 22-го Іюня 1895 года. Տպարան Մ. Նազարեանի Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.